

ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ

ՄԵՐ ՊԱՐՔԵՐԱԿԱՆՆԵՐԸ

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ. — Մեր պարբերականները ամսե ամիս առատ բերք են տալիս հայ մշակոյթին: Մշտական ընթերցողը գոհունակութեամբ կարճանագրէ այս փաստը: Այլ է խնդիրը, թէ ընթերցողը ինքը ի՞նչպիսի վերաբերում է ցոյց տալիս դէպի հայ տպագիր խօսքը: Մէկ նմոյշ ահա «Հանդէս Ամսօրեա»ն՝ մեր պատկառելի եւ վաստակաւոր հայագիտական ուսումնաբերքը, որ անդու ջանասիրութեամբ շարունակում է Մխիթարեան հայագէտների լաւագոյն աւանդութիւնները: Վերջին՝ նոյն-դեկտեմբեր համարի խմբագրական ազդից տեղեկանում ենք, թէ հանդէսը տնտեսական ցաւալի տագնապի մէջ է: Խմբագրութիւնը յանձն է առել ծանր գոհողութիւններ: «Բայց չգտաւ փաշտելութիւն. չգտաւ ընթերցողներու շրջան: Չեղաւ հնարաւորութիւն ոչ միայն տարիներու ընթացքին ընդարձակել ուսումնաբերքին ծաւալը, այլ եւ ահա հարկին մէջ կը գտնուի նւագեցնել թերթին ծաւալը քառորդով: Թէ հարուստը եւ թէ գրագէտը տնտեսական տագնապը պատմառ բերին հրաժարելու ուսումնաբերքին բաժանորդագրութենէն: Այսպէս թերթին հրատարակութեան բովանդակ ծախքերը ծանրացան խմբագրութեան ուսին: «Հանդէս Ամսօրեա»յի 1933 տարեշրջանը ահաւոր բացով կը փակէ իւր հաշիւը»:

Անկեղծօրէն ցաւում ենք հայագիտական մեր լաւագոյն հանդէսի այս վիճակի համար: Հապա ամօք չունի՞նք ազգասիրութիւնից մատուցող հայ հարուստները, որոնցից իւրաքանչիւրը տարւայ մէջ մէկ խնջոյք պակաս անելով՝ կարող էր վայելուչ ձեւով ապրեցնել այս հանրօգուտ ձեռնարկը:

1933 տարւայ ընթացքին «Հանդէս Ամսօրեա»ն տեց մէկից աւելի արժէքաւոր ուսումնասիրութիւններ, ինչպէս խմբագիր Հ. Ն. Ալիքեանի «Եղիշէ վարդապետ եւ իւր Պատմութիւն Հայոց Պատերազմին» բնական ուսումնասիրութիւնը, «Սիմէոն Դպրի Լեւազոյ Ուղեգրութիւնը» կամ «Մովսէս Գ. Տաքեւացի կար. . . Կեանքն ու Գործը» և այլն: Ապա՝ Ս. Սարուխանի «Վրաստան եւ Հայերը», Հ. Ա. Որրլադեանի «Յովհ. Այվազովսկի ծովանկարիչ», Հ. Տաշեանի հմուտ գրութիւնները եւ այլն:

Յիշած բոլոր ուսումնասիրութիւնների մէջ ամենէն ուշագրաւը, անշուշտ, Հ. Ալիքեանինն է Եղիշէի Պատմութեան մասին: Հ. Ալիքեանը յայտնում է տեսակէտներ, որոնք տրամագծօրէն հակառակ են ցարդ տիրող կարծիքին: Այդ տեսակէտներն, ի հարկէ, դեռ կը գրադեցնեն հայագէտ գիտնականներին:

ՍԻՈՆ. — Հայագիտական քանասիրական տեսակէտից հետզհետէ սկսում է աչքառու տեղ գրաւել եւ Երուսաղէմի «Սիոն» կրօնական - գիտական - բանա-

սիրական ամսագիրը, որ շատ կողմերով յիշեցնում է Էջմիածնի երբեմնի «Արարատ»ը:

Եղիշէ արքեպ. Դուրեանի պատրիարք դառնալուց յետոյ, Երուսաղէմը, կարծես, վերակենդանացաւ. դպրոց, տպարան, մատենադարան դրեցին ուշադրութեան կենտրոնում: 1926թ. սկսեց լոյս տեսնել «Սիոն» ամսագիրը (նոր շրջան): Դուրեանի մահից յետոյ, սկսած գործը շարունակեց նրա յաջորդ Թորգոմ պատրիարքը, եւ վիճակից ու վեցերորդից յետոյ, կամ եւեց նրանց շարքում, Երուսաղէմն էլ դարձաւ հայագիտական-հրատարակչական աշխատանքի կարեւոր վայր: Վկայ՝ Երուսաղէմի տպարանից լոյս տեսած մի շարք արժէքավոր հատորներն ու 7 տարւայ «Սիոն»ների բանասիրական բաժինը:

«Սիոն»ի նոյեմբերի համարը բացառապէս նւիրած է Երուսաղէմի տպարանի հարկւրամեակին: Մի շարք յօդւածներով ներկայացած է վանքի հարկւր տարւայ մշակութային կեանքը: Այդ յօդւածների շարքին առանձնապէս հետաքրքրական է *Մեսրոպ եպ. Նշանեանի* ընդարձակ ուսումնասիրութիւնը տպարանի հարկւրամեայ գործունէութեան մասին:

«Սիոն»ի անցեալ տարւայ համարներում, ի միջի այլոց, լոյս տեսան *Գարեգին արքեպ. Յովսէփեանի* երկու վերին աստիճանի հետաքրքրական ուսումնասիրութիւնները՝ «Վախտանգ Որդի Ումեկայ եւ նորա տոհմը» եւ «Իգնատիոս մանրանկարիչ և Շոթոկանց տոհմը»: Բանասիրական - պատմական մասից յիշենք նաեւ *Եղ. արք. Դուրեանի* գրութիւնների շարքը «Անթեղւած

կայծեր» ընդհանուր վերնագրի տակ, *Պօղոս Գ. Պատր.* - Է «Ինքնակենսագրութիւնը», ինչպէս նաեւ մի շարք դիւանական հոսմաներ:

«Սիոն»ի այս տարւայ յունւարի համարում հետաքրքրական է *Գարեգին արք. Յովսէփեանի* «Պատասխանը վերապատելի Կ. Պ. Ատանապեանի Հարցումներին»: Վեր. Ատանապեանը երկու գրութեամբ մի շարք հարցումներ է ուղղել կաթողիկոսին՝ յուսուորչական եւ բողոքական եկեղեցիների փոխյարաբերութեան մասին: Կաթողիկոսի յանձնարարութեամբ Գարեգին արք. պատասխանում է. — Պահել եւ վերակենդանացնել Հայաստանեայց ազգային եկեղեցին, հայ միւս հատւածները (կաթոլիկ, բողոքական), իբրեւ փոքրամասնութիւններ, պէտք է օժանդակեն հայկական ուրոյն ամբողջութեան պահպանման ու զարգացման: Կաթոլիկութիւնը, ինչպէս եւ բողոքականութիւնը «Հայոց մէջ ինքնաբերաբար յառաջ եկած շարժում չէ, այլ դրսից է ներմուծւած», ինչպէս դրսից է ներմուծւած, կարող ենք աւելացնել մենք, բոլորիզմը: «Դրսի ոյժ» էր եւ «ցարական կառավարութեան ժամանակ ռուսական եկեղեցին», որի ազդեցութեան տակ «կոստանական շարժում էր սկսում մեր սահմանադր. ճիւղերի մէջ յաւիտաւատեո ոտանայու կամ անձնական վէճեր ու բշխամութիւններ յաջող լուծելու նպատակով. սաշտպանութիւն գտնելով ներշնչւած պետական սաշտօնեաներից, երբ հայ եկեղեցու սպասուորներն ախորհ սատոնայիքի տակ հնարաւորութիւն տունէին իրենց աստուարութիւնը կատարելու՝ մոլորւածներին դարձի

բերելու նկատմամբ», — նիշտ եւ
նիշտ, կաւելացնենք մենք, ինչ-
պէս այսօր, երբ խորհրդային
կառավարական դրամով գործող
«Ազատ եկեղեցին» ռուբլի հանւեց
էջմիածնի դէմ, երբ «հայ եկե-
ղեցու սպասաւորները գնդակի
սպառնալիքի տակ հնարաւորու-
թիւն չունին... մոլորածներին
դարձի բերելու»:

ՀԱՅՐԵՆԻՔ ամսագրի վեր-
ջին 2 համարներում (դեկտ.,
յունւար) պատմական-բանասի-
րական մասում վերջացել են
«Բագրատ վրդ. Թաւաֆալեանի
նամակները», շարունակում են
Մ. Աբրահամեանի «Յիշատակելի
Օրեր» յուշերը, Յ. Քիւրդեանի
«Հին Ճանապարհորդագրութիւն-
ներ Հայաստանի եւ Հայոց մա-
սին», Ա. Գիւլիսանդանեանի «Հայ
Թաքարական Ընդհարումները
Բագւի մէջ», Մ. Օգանեանի «Ա.
Վառման իբրեւ հրապարակա-
գիր» (յունւ.), Արմէնի «Հ.Յ.Դ.
Պալատներում մէջ» (յունւ.): Բո-
ւորն էլ արժէքաւոր պատմական
նիւթեր:

Դեկտեմբեր ամսից սկսել են
տպւել Յ. Մովսէսեանի կենդանի
ու կենցաղային փաստերով յա-
գեցած յուշերը, որ հիտուրեամբ
գրի է առել Ա. Աճառեանը: Նոյն
ամսից լոյս է տեսնում եւ Կ.
Մանգալուճու «Դէպի Կոնի» աշ-
խատութիւնը — ռուսահայոց ազ-
գային կայսածնի գրական վե-
րաբերող փաստեր ու վաւերա-
գրեր, որոնց մեծ մասը թէւ
ժամանակին հրատարակւած է,
բայց ներկայ ամփոփումն ու
լուսարանութիւնը օգտակար ծա-
ռայութիւն է հայ պատմութեան:

ՎՐԱՅ ՄԱՄՈՒԼԻՅ

Թիֆլիսի վրացերէն «Մա-
թուր» պարբերականի 1933թ.
№ 5-ում, վրաստանի համալսա-
րանի ուսուցչապետ Լեւոն Մե-
լիֆութեքբը լոյս է ընծայել «Նա-
ղաշ Յովնաթան Աշուղ»-ին նւիր-
ւած մի յօդւած: Մելիֆութեքբը
ակադ. Ն. Մառի աչքի ընկնող
աշակերտներից է եւ գրադուր է
գլխաւորապէս հայ — վրացական
մշակութային կեանքն ու յարա-
բերութիւնները բնորոշող նիւթե-
րով: 1930թ. նա հրատարակեց
վրացերէն լեզուով մի գեղեցիկ
աշխատութիւն Սայեաթ-Նովայի
մասին, որ յաճախ է յիշում մեր
աշխատակից Յ. Զարեանի «Վե-
մ»-ում տպւող ուսումնասիրու-
թեան մէջ:

Իր յօդւածում Նաղաշ Յով-
նաթանի մասին Մելիֆութեքբը
տալիս է աշուղի համառօտ կեն-
սագրութիւնը, խօսում է նրա
թողած գրական ժառանգութեան
մասին, որից նմոյշներ է տալիս
վրացերէն թարգմանութեամբ:
Բացի այդ, նա հաղորդում է մի
շարք նոր տեղեկութիւններ Յով-
նաթանեանների տոհմի գեղար-
ւեստական գործունէութեան մա-
սին — Նաղաշի, սրա որդի Յա-
կոբի եւ թոռ Յովնաթան Յով-
նաթանեանի: Այս վերջինս Սա-
յեաթ-Նովային ժամանակակից
նշանաւոր նկարիչ էր. նրա վրձի-
նին են պատկանում վրաց ար-
քայական ընտանիքի մի քանի
անդամների նկարները, ինչպէս
նաեւ Հայաստանի եւ վրաստանի
մի շարք եկեղեցիների, ի թիւս
ռոռնց եւ Իսմիածնի մայր տաճա-
րի օրմանկարները:

Մելիֆութեքբի յօդւածից յե-
տոյ, դուրս է Նաղաշ Յովնաթա-